

Լ.ԹԱՐԳՅՈՒԼ

ՈՒՂՏԻ ՊԱՐԸ
ԿԱՄՐՃԻ ՎՐԱ



ՀԱՅՄԵՏՐՈՍ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1940

15061/109

8 APR 2013

8671

Մի մարդ ունենում է մի եղևնի և մի ուղտ:
Մարդը նրանց քիչ երկերակրում, շատ բանեց-
նում: Վերջապես խեղճ անասունները հոգնածու-
թյունից ել չեն կարողանում փոխերը տեղը մախաթով իշին բզում և, իսկ ուղտին՝
մորակում:

Մի օր, յերբ ուղտի համբերությունը հաս-
նում է, վորոշում է հեռանալ տիրոջից: Բայց
վորովհետև եղևնի իր լավ ընկերն էր, այդ պատ-
ճառով չի ուզում նրան մենակ թողնել. առա-
ջարկում է միասին փախչել:

— Գնանք, մեզ համար մի քանի օր ազատ
ման գանք: Հետո գուցե լավ տեղ ճարենք, միա-
սին աշխատենք:

Եղևնի լսում է ուրախությունից տրախդ և
տալիս:

— Մենակ թե, եղևնիներ, չգուռաս, — զգու-
շացնում է սասլատավորը, — ձենիդ վրա տեղը
կգա մեզ կգանի ու են ժամանակ վայր յիկել և,
մեզ տարել:

— Ինձ հիմարի տեղ ես գնում, ինչ է, —
վիրավորվում է ավանակը: — Ետպես բան չեմ
անի, ուղտ ախարս չեմ մատնի:

Յերեկոյան յերբ տեղը պառկում, խոր քուն է
մտնում, նրանք յեղնում են, գաղտնի հեռանում:
Գնում են, գնում, տեսնում են մի սար, եղ
սարի փեշին՝ կանաչ խոտ, գլգլան ջրեր: Ախոր-
ժակով արածում են, սառն աղբրից կուշտ ջուր

891.995

30 MAY 2011

Թ-33 խմում, ապա ծաղիկների մեջ թավալին տալիս,
գլուխները դնում միմյանց ծնկին ու յերջանիկ
բացականչում:

— Ոխայ... Ի՜նչ անուշ է կյանքը...

Բնում, զարթնում, դարձյալ վուվում են
թավիշ խոտերի մեջ: Սարի մարմանդ հովն ուրը
է ասում նրանց և նորից քաղցր-անուշ քնում են:

Ազատ կյանքից, լավ սննդից առույգանում
է թմրած եղևնի. մարմնի վերքերը լավանում են,
ցից վոսկորները ծածկվում են:



ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԸՈՒ. 07 81.000.000

320
47

Ու մեկ եւ ականջը ցցելով, բացականչում է.

— Ուղտ ախպեր, յես պիտի գոամ...

— Հո չե՞ս գժվել, — բարկանում է ընկերը, — ուղտում ես վոր տերը գա, մեզ բռնի՞, մոռացել ես մախաթը...

— Ե՛ն ի՛նչպես կարող ե ծաղկոտ տեղեր, գուլա՛լ ջրեր տեանել ու չզուալ, — զարմացած ասում է ավստակը:


— Ախր դրանով ինձ ել ես մատնում: Մոռացել ես խոստումդ:

Մոխրաթավառն ընկերով վրա ուշադրութիւն չի դարձնում. իշավարի թավալվում է մեջքի վրա, բերանն ականջից-ականջ ձգում, ախորժակով զոգում:

Ծանոթ ձենի վրա, տերը գալիս, գտնում է փախստականներին, ծեծելով տանում է գոմը, դուռն վրա մեծ կողպեք դնում և, վորպես պատիժ, նրանց միքանի որ խոտից ու ջրից զըրկում է:

Ուղտը դրանից առանձնապես չի սուժում, քանի վոր սապատներում կերի պաշար ունեք, մինչդեռ ելը թուլանում է, վոսկորները ցցվում են, խղճացած կախում է գլուխը:

— Զիշտ վոր, ե՛ն ի՛նչ գիտե նու՛շն ինչ ե — հառաչում է ուղտը: — Հիմի մենք տրախեք կըտայինք ազատ դաշտերում, անուշ հովը մեզ հեքյաթ կասեր.. Յերջանկութիւնը թոցըրը մեր ձեռքից: Ե՛լ հա... ել:



Դրանից հետո, տերն իր կենդանիներին ավելի շատ եր չարչարում, իսկ գիշերները կապում եր, վոր ել չհամարձակվեն փախչել:

Մի անգամ տերը իշին և ուղտին ցորեն է բարձում, վոր տանի ջաղաց:

— Ուղտն ինձանից ուժով է, լեզուն ել յերկար... Մեջքը չի կտարվի, վոր բռն ել տանի, — մտածում է ելը, և, ճանապարհին սուտ սատկած ձեվանալով, փուվում է ցեխի մեջ:

Տերն ինչքան բզում է, ինչքան պոչիցը քաշըրչում է, վոչինչ չի դուրս գալիս:

— Ճիշտ վոր սասկել ե, — հավատում ե տերը, — յեթե սրան դաշտում թողնեմ, անցորդները մաշկը կքրթեն, նալերը կպոկեն: Ի՞նչ տեսնո՞ւմ: Յե՛վ առանց յերկար-բարակ մտածելու, ուղտին չուեցնում ե և եղն իր բեռով բարձում նրան:

Ուղտը հասկանում ե եղի արարքը, բայց ձեն չի հանում:

— Կեղծ ընկերոջ հետ ել չարժի ապրել, — վորոշում ե նա: — Իմ բեռն ու տանջանքն ինձ բավական չեր, յեկ հիմի եղին ել տար...

Ուղտը ծանր բեռան տակ հազիվ եր վրաները փոխում, մինչդեռ եղը, ընկերոջ մեջքին բազմած, քթի տակ ծիծաղում եր:

— Դե թող սրանից հետո ասես, վոր եղը հիմար ե: Իշի գլուխ... — հպարտ ժպտում եր նա: — Թե հիմար լինեյի, հո եսպես խելոք բան չեյի մտածի:

Յերբ մոտենում են կամրջին, ուղտը, նայելով փռած տախտակներին, վարար գետին, բացականչում ե.

— Ես կամրջի վրա յես պիտի պարեմ...

Եղը, մոռանալով իր սուտ սատկած լինելը, վախեցած աղաչում ե.


— Ամա՛ն, ուղտ ախպեր, եղպես բան չանես... Իմ մասին մտածիր:

— Քո են որվա գլուցին իմ ես պարը շատ

կսաղի, — վշտացած պատասխանում ե ուղտը և վեր-վեր թռչում.

Կամուրջը կոտրվում ե, և բոլորը միասին ընկնում են գետը:

Ուղտը լողալով դուրս ե գալիս, վոր ման գա, լավ ընկեր ճարի, հետն աշխատի, իսկ եղն ու տերը խեղդվում են, զնում...



ՀՀ Ազգային գրադարան



NL0399528

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

8671

Նկարները՝ Հ. Ռոստոմյանի
Պատ. խմբ.՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբ.՝ Ա. Մ. Գապարյան
Լիտ. նկարիչ՝ Ս. Գապարյան
Արքագր.՝ Ս. Փաբադյան

Գրավիտի լիպոթ՝ Բ—1066 Հրատ. 5182
Պատվեր 214. Տիրած 3000

Հաշվետվարի տպարան, Յերևան,
Լենինի փողոց № 65.

Л. ТАРГЮЛЬ
ТАНЕЦ ВЕРБЛЮДА
НА МОСТУ

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

891.995

10-33